ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 24 2021 № 1

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

ՀՏԴ՝ 91.19
DOI: 10.52971/18294316-2021.1-108

# ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Գուրգեն Խաչատրյան***
***Երանուհի Հովհաննիսյան***
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

**Բանալի բառեր՝** *գրաբար, հետդասական գրաբարի ենթաշրջան, հոլովական զուգաձևեր, երկանդամ զուգաձև, եռանդամ զուգաձև, հոլովիչ, ձայնավորահանգ և ձայնորդահանգ հոլովումներ, հոլովման համակարգ:*

Հոդվածում քննության առարկա են դարձել գրաբարի անունների (մասնավորապես գոյականների և ածականների) հոլովական զուգաձևությունները, որոնք թեև արժանացել են քերականագետների ուշադրությանը[1], սակայն առայսօր համալիր ուսումնասիրության չեն ենթարկվել: Նպատակ է հետապնդվում քննության առնելու միայն համաժամանակյա կտրվածքում վկայված հոլովական զուգաձևերը, մասնավորապես՝ դասական գրաբարի ենթաշրջանում վկայվածները:

[1] **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987, էջ 436; **Աբեղյան Մ.** Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ, 1936, էջ 118-123: **Туманян Э. Г.** Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238-239; **Շարաբխանյան Պ.Ե.**, Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ.,1974, էջ 155-156: **Աբրահամյան Ա. Ա**. Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1976, էջ 63-64: **Ավետիսյան Հ.Մ., Ղազարյան Ռ.Ս.**, Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 2001, 55: **Առաքելյան Վ.Դ.**, Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր» հրատ., 201, էջ 79-83: **Խաչատրյան Գ. Կ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011 էջ 4-18: **Խաչատրյան Գ. Կ.**, Գրաբար, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2014, էջ 90-98:

Հոդվածի լեզվական նյութը քաղել ենք ՆՀԲ-ից, համեմատել Վ. Առաքելյանի ներկայացրած բառացանկի հետ[2], դասակարգել՝ ըստ տարբեր հոլովումների համադրությամբ ձևավորված ենթախմբերի՝ նպատակ ունենալով վեր հանելու այն օրինաչափությունները, որոնք նշված ենթաշրջանում ընկած են հոլովական զուգաձևերի առաջացման հիմքում, ինչպես նաև ներկայացնելու զուգաձևերի զարգացման դինամիկան[3]:

Քննությունը հիմնականում կատարել ենք համեմատության մեթոդով՝ ըստ անհրաժեշտության կիրառելով նաև վերլուծական և զուգադրական մեթոդները՝ գերազանցապես առաջնորդվելով համաժամանակյա հայեցակետով:

***Նախաբան.*** Լեզվաբանական տեսանկյունից զուգաձևեր են համարվում հնչյունական, բառային կամ քերականական այն միավորները, որոնք իմաստով (գործառույթով) նույնն են, իսկ ձևով՝ տարբեր[4]: Լեզվական փաստերը վկայում են, որ զուգաձևերով հարուստ են գրական հայերենի բոլոր շրջանները: Ահավասիկ զուգաձևության օրինակներ գրաբարից (*ուռնում//ուռչիմ, մեղու//մեղեր* և այլն), միջին հայերենից (*լինիմ//լինամ, լուսնեկի//լուսնեկան* և այլն) և ժամանակակից հայերենից (*բերի//բերեցի, գառի//գառան* և այլն): Գրական հայերենի բոլոր շրջաններում զուգաձևեր են հանդիպում ոչ միայն տարբեր ենթաշրջաններում վկայված գրավոր աղբյուրներում, այլև միևնույն ենթաշրջանում գրված տարբեր աղբյուրներում և նույնիսկ միևնույն հեղինակի նույն (կամ տարբեր) գործ(եր)ում: Հատկանշական է նաև, որ գրական հայերենի բոլոր շրջաններում առանձնանում են թե՛ հնչյունական, թե՛ բառային և թե՛ քերականական զուգաձևեր, ինչը լավագույնս վկայում է, որ հայոց լեզուն՝ որպես կենդանի համակարգ, հետզհետե փոփոխության է ենթարկվում, որտեղ մի շարք լեզվական միավորներ աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից՝ տեղը զիջելով լեզվակիրների կողմից զուգահեռաբար գործածվող միավորներին:

Զուգաձևերի առաջացումը կարող է պայմանավորված լինել ինչպես լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով և լեզվակիրների անհատական մոտեցումներով, այնպես էլ արտաքին ազդեցություններով ու այլ հանգամանքներով (բառերի

---

[2] Լեզվական փաստերը համեմատելիս պարզել ենք, որ հիշյալ բառացանկում Վ. Առաքելյանը՝ ա) *անշունչ* բառին վերագրել է *ի-ա//ի* հոլովական զուգաձևություն, մինչդեռ ՆՀԲ-ում նշվում է *ի//ո* զուգաձևի մասին, բ) *մժեխ* բառին վերագրել է *ի-ա//ո* զուգաձևություն, մինչդեռ այն ունի *ի//ի-ա* համադրությամբ զուգաձև, գ) *վաճառ* բառին վերագրել է *ի-ա//ու* զուգաձևություն, մինչդեռ այն եռաբաղադրիչ զուգաձև է՝ *ի-ա//ու//ո* տարբերակով, դ) *կողոպուտ* և *ժամ* գոյականները ներկայացրել է *ու//ի* զուգաձևությամբ, մինչդեռ առաջինը *ո//ի* համադրությամբ զուգաձև ունի, երկրորդը՝ *ու//ի-ա*: Բառացանկը համալրել ենք դասական գրաբարի ենթաշրջանում *է//ի-ա* տարահիմք հոլովմամբ առանձնացող *աղբիւր, անգղ, աստղ, եղջիւր, կայսր* և *ի//ո* հոլովական զուգաձևությամբ հանդես եկող *այրեցած* գոյականներով:

[3] Հոդվածի ներածական, ամփոփիչ մասերը և ծանոթագրությունները հեղինակել է Գ. Խաչատրյանը, բուն տեքստային մասի համահեղինակներն են Գ. Խաչատրյանը և Ե. Հովհաննիսյանը:

[4] **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարագյուլյան Թ. Ա.**, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 100:

բնիկ կամ փոխառյալ լինելը, դրանց ձևաիմաստային առանձնահատկությունը, փոխառման ժամանակաշրջանը և այլն), որոնց բացահայտումը դուրս է մեր նպատակներից[5]: Գտնում ենք, որ զուգաձևերի անդամներից «շատերը ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի հայերենի բառապաշարի ժողովրդախոսակցական շերտը» [6]:

Գրաբարի հոլովական զուգաձևերին առաջին հիմնավոր անդրադարձը կատարվել է դեռևս 19-րդ դարի 30-ականներին[7], իսկ առաջին գիտական քննությունը կատարել է Ա.Այտընյանը՝ դրանք անվանելով «կրկին հոլովմունք»: Լեզվաբանը նշում է. «Շատ անուններ երկու կամ երեք հոլովմանց կերպ ալ կրնան հոլովիլ», ապա բերում ոչ միայն հայերեն բառերի հոլովման զուգաձևեր (*զգեստու// զգեստիւ//զգեստով, բերդից//բերդաց, մոգաց//մոգուց, նաւի//նաւու//նաւով, նաւաց//նաւուց, լուսնի//լուսնոյ* ....), այլև մատնանշում օտար բառերով պայմանավորված զուգաձևեր նույնպես: «Այսպէս շատ օտար անուններ,- գրում է նա,- թէ հայերէն և թէ օտար (յունարէն) կերպով կը հոլովին. զորօրինակ. *Փիլիպպոսի* կամ՝ *Փիլիպպեայ. Մատթէոսի* կամ՝ *Մատթէի* .... »: Նրա տեսադաշտից չի վրիպել և այն, որ շատ անուններ «բարդութեանց եւ ածանցից մէջ .... հոլովումնին կփոխեն», ինչպես՝ սէր – *սիրոյ,* բայց՝ իմաստասէր – *իմաստասիրի,* խրատ – *խրատու,* բայց՝ անխրատ – *անխրատի* և այլն[8]:

Հետագա քերականագետները գերազանցապես կրկնել են գրաբարի անունների հոլովական զուգաձևերին վերաբերող հիշյալ ձևակերպումները: Հիշարժան դիտարկումներ ունեն միայն Վ. Առաքելյանը և Է. Թումանյանը: Ըստ Վ. Առաքելյանի մի անտիպ աշխատության մեջ ներկայացրած, հոլովական զուգաձևեր ունեցող անունների (տվյալ դեպքում՝ գոյականներ և ածականներ) ցանկի և Է. Թումանյանի կատարած նախնական հաշվարկի՝ գրաբարում առանձնանում է այդ կարգի շուրջ 140 բառ[9], որոնք հանդես են բերում երկու, երբեմն՝ երեք հոլովական զուգաձևեր[10]: Խնդրո առարկա հարցին Վ. Առաքելյանն անդրադառնում է նաև վերջերս լույս տեսած «Գրաբարի քերա-

---

[5] Խոսելով հոլովական զուգաձևությունների առաջացման մասին՝ Մ. Աբեղյանը միանգամայն ճիշտ է նկատել. «Այդպիսի փոխանցումները հոլովումների խմբերի մեջ՝ մեծ մասամբ հետագա ժամանակներում են յերևան գալիս և տարբեր բարբառների ազդեցության արդյունք են» (Տե՛ս **Աբեղյան Մ**. Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ., 1936, էջ 118):

[6] **Խաչատրյան Գ. Կ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011, էջ 17:

[7] Նկատի ունենք ՆՀԲ երկհատորյակը, որի համապատասխան բառահոդվածներում ամենայն բարեխղճությամբ նշվել են գրաբար գրավոր աղբյուրներում վկայված հոլովական զուգաձևերը:

[8] **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987էջ 436]:

9. **Туманян Э. Г.** Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238.

[10] Խոսքը Վ. Առաքելյանի «Ակնարկներ դասական հայերենի պատմության» խորագրով մի աշխատության մասին է, որը հեղինակը դեռևս անտիպ վիճակում տրամադրել է Է. Թումանյանին՝ արժանանալով վերջինիս շնորհակալական խոսքին (Տե՛ս **Туманян Э. Г.** Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 196):

կանութիւն» աշխատության մեջ[11], որում՝ ա) առանձնացնում է գրաբարյան շուրջ 140 գոյական և ածական, որոնք դասական գրաբարի շրջանում ունեն հոլովման զուգաձևեր (*աղախին, աղանդ, աղերս, աղէտ ..... կոնք, կուզ, կրտսեր* և այլն)՝ զանց առնելով այն անունները, «որոնց դասական շրջանի հոլովումը յետդասական շրջանում փոխուել է, բ) հետևելով Ա. Այտընյանին՝ առանձնացնում է նաև օտար հոլովման վերապրուկներ, որոնց մի մասը պատճառ է դարձել հոլովական զուգաձևերի առաջացման (*Դիկապոլին//Դիկապոլիս, Կադմոն//Կադմոս* և այլն), գ) ներկայացնում է այլ պատճառներ, որոնց հետևանքով նույնպես կարող էին առաջանալ հոլովական զուգաձևեր[12]: Ըստ Է. Թումանյանի՝ հոլովական զուգաձևերը, որոնք առաջանում էին բառերի՝ մի հոլովումից մեկ այլ հոլովման անցումով, որտեղ նոր հոլովաձևերին զուգահեռ պահպանվում էին նաև հները, վկայում են գրաբարում հոլովման համակարգը վերափոխող խորքային գործընթացների առկայության մասին, ինչը հետագայում հանգեցրեց հոլովումների պարզեցման և միօրինակացման: Է.Թումանյանն իրավացիորեն նշում է նաև, որ նկատվում է հոլովման որոշ տիպերի կրճատում մյուս տիպերի ընդարձակման հաշվին[13]:

Գրաբարի անվանական հոլովման համակարգում առկա զուգաձևերի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք ներկայացնում են անմիօրինակ պատկեր թե՛ զուգաձև կազմող բաղադրիչ անդամների քանակի տեսանկյունից և թե՛ ժամանակագրական առումով:

Ըստ զուգաձև կազմող բաղադրիչների քանակի՝ գրաբարի հոլովական զուգաձևերը լինում են՝ ա) երկանդամ, որոնք գրաբար լեզվական աղբյուրներում նկատելիորեն հաճախադեպ են, իսկ տարբեր հոլովիչների համադրման տեսանկյունից՝ բազմազան, ինչպես՝ *ո//ի-ա, ու//ո, ի//եան, ո//ո-ա* և այլն, բ) եռանդամ, որոնք թե՛ գործածության հաճախականությամբ և թե՛ տարբեր հոլովիչների համադրման առումով անհամեմատ սահմանափակ են, ինչպես՝ *ի//ի-ա//ո, ո//ու//ի-ա* և այլն և գ) քառանդամ, որոնք հազվադեպ են, ինչպես՝ *ու//ի-ա//ի//ո,* որով, օրինակ, առանձնանում է *խրատ* բառի հոգնակի գործիականը՝ *խրատուք//խրատօք//խրատիւք//խրատովք*:

Հոլովական զուգաձևերի առաջացման ժամանակագրությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասի երկու կամ երեք բաղադրիչներն էլ ներկայացնում են գրաբարի միևնույն ենթաշրջանը (համաժամանակյա զուգաձևեր)[14], մինչդեռ մյուս զուգաձևերի բաղադրիչները տարբեր ենթաշրջաններում կամ դարերում են վկայվել (տարաժամանակյա զուգաձևեր), ինչպես՝ 5-րդ և 6-րդ դդ., 5-րդ, 8-րդ և 9-րդ դդ., 8-րդ և 11-րդ դդ. և այլն): Հարկ է նկատել, որ հետդասական գրաբարի ենթաշրջանում զուգաձևերի թիվն անհա-

---

[11] Կարծում ենք՝ ժամանակին Է. Թումանյանին տրամադրվել է Վ. Առաքելյանի հենց այս աշխատության անտիպ տարբերակը՝ «Ակնարկներ դասական հայերենի պատմության» խորագրով:

[12] **Առաքելյան Վ. Դ.**, Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր» հրատ., 2010, էջ 80-86:

[13] **Туманян Э. Г.** Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238.

[14] Հին գրական հայերենի կամ գրաբարի շրջանը (5-11-րդ դդ.) ամբողջանում է 3 ենթաշրջաններով՝ «դասական գրաբարի ենթաշրջան» (5-րդ դ.), «հետդասական գրաբարի ենթաշրջան» (6-7-րդ դդ.), «նախամիջին հայերենյան ենթաշրջան» (8-11-րդ դդ.) (Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք» հրատ., 1969, էջ 36-44):

մեմատ մեծանում է. բավական է նշել, որ, ըստ մեր հաշվարկների, ՆՀԲ-ի միայն առաջին հատորում դրանց թիվը հասնում է մոտավորապես 450-ի:

***Դասական գրաբարի ենթաշրջանի անվանական հոլովման համակարգի զուգաձևությունները***

Դասական գրաբարի ենթաշրջանում հոլովական զուգաձևերը լինում են՝

1. երկանդամ,
2. եռանդամ:

1. *Երկանդամ զուգաձևություններում* հոլովիչները հանդես են գալիս մի շարք համադրություններով, որոնք են՝

1.1. *ո//ի-ա,* որով հանդիպում 26 անուն՝ *աղախին, աղանդ, ամուր, բոյթ, գիշեր, երանգ, թաղանթ, լար, խաղող, կապար, կրտսեր, մառախուղ, որթագլուխ, պաշար, փոկ, քանքար* և այլն: Ահավասիկ օրինակներ *աղանդ* բառի զուգաձևերով[15]՝ Եզնիկ Կողբացու երկից՝ Այս սկիզբն է *աղանդոյն* Մարկիոնայ (ԵԿ): Այս ամենայն վասն մարկիոնաց *աղանդին* ասացաւ (ԵԿ): Ուստի և *աղանդացն* առեալ նովին դանդաչեն (ԵԿ):

1.2. *ի-ա//ո,* որով հանդես եկող 15 բառերից են՝ *աղքատ, ման, անձրև, ապտակ, առաւել, բաղարջ, կաշառ, նանիր, նշանագիր, սնգոյր, տաղանդ, փոճոկ* և այլն: Ահա համապատասխան օրինակներ *ման* բառով՝ Աստվածաշնչից՝ Եւ արծաթ իւրաքանչիւր *յամանի* իւրում էր (ՍԳ): Եւ առցէ քահանայն ջուր սուրբ կենդանի խեցեղէն *ամանաւ* (ՍԳ): Եւ դիք զարծաթն իւրաքանչիւր ի բերան *ամանոյ* իւրոյ (ՍԳ):

1.3. *ի//ո,* որով առանձնացող բառերը 20-ն են՝ *այրեցած, անշունչ, անութ, գորտ, դրամ, է, մեղէխ, նոճ, չէ, փոխ, քաղց, քարոզ, օղ* և այլն: Օրինակներ *այրեցած* գոյականով՝ Որ ունին զօրինակ յայտնութեան զմերկութիւն *այրեցածին* (ԱԳ): Ծուխն *այրեցածոյն* ելեալ մածեալ զնոքօք (ԱԳ): Հմմտ. նաև՝ Յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և *այրեցածոյն* (ՓԲ): Չափեցին .... եւ զանբնակս *յայրեցածէն* մինչև ցՔիմիւռոն (ՄԽ) և Եւ լինիցի տեղի *այրեցածին* փայլուն կամ պաղպաջ սպիտակ« կամ կարմրացեալ (ՍԳ):

1.4. *ո//ի,* որով հանդես է գալիս 11 գոյական՝ *աղերս, բեր, գուբ, դարման, լուսին, ճիչ, մազ, մութ, ցուրտ, փորձ, փոր*: Օրինակներ *դարման* բառով՝ Եւ փութացաւ նմա տալ զաճառն եւ զասն *դարմանոյ* նորա (ՍԳ): Եւ մեք *դարմանովք* կարեմք բժշկել (ԵԿ) և Վասն պէսպէս *դարմանից* (ԵԿ):

1.5. *ի//ի-ա,* որը երկբաղադրիչ զուգաձևություններից առավել ծավալունն է (30 անուն)՝ *աղէտ, անյոյս, ապառաժ, արբշիռ, գունդ, դաստակերտ, եկամուտ, զոյգ, ժանտ, իղձ, խծբիծ, կոնք, մժեխ, նշոյլ, շնորհ, սուտակասպաս, տռիմ* և այլն: Օրինակներ *դաստակերտ* գոյականով՝ Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ *դաստակերտին* Երուանդակերտի (ՄԽ): Ամենայն հայոց աշխարհիս .... *դաստակերտիցդ* կայսերաց (ԱԳ): Եւ

[15] Հետագա շարադրանքում գերազանցապես բերում ենք եզակի սեռական, գործիական և հոգնակի սեռական հոլովաձևերով օրինակներ, որովհետև բառերի՝ այս կամ այն հոլովման պատկանելության հարցում որոշիչ դեր ունեն այդ հոլովաձևերը: Հազվադեպ անդրադառնում ենք նաև այլ հոլովաձևերի: Ի դեպ, նկատենք, որ լեզվական աղբյուրներից զուգաձև հոլովվող սակավաթի՛վ բառերի բոլոր հոլովաձևերով կարելի է վկայություններ քաղել:

տալ գահու եւ պատուոյ, հանդերձ իշխանութեամբ գիւղից եւ *դաստակերտաց* Համազասպայ (ՄԽ)։ Զտունս նոցա հանդերձ գիւղօք եւ գիւղիւք և *դաստակերտօք* հրամայեցաք ունել յարքունիս (ՄԽ)։

1.6. *ի-ա//ի,* որով առանձնանում է 4 բառ՝ *գէտ, գռեհ, հրաշակերտ, սաղմոս*։ Օրինակներ *սաղմոս* գոյականով՝ *Զսաղմոսից* և զօրհնութեանց (ՆՀԲ)։ Արդ եւ ես խոստովան եղէց քեզ ի պատրաստութիւն *սաղմոսաց* (ՍԳ)։ Զգիշերն ամենայն *սաղմոսիւք* ի գլուխ տանէին (Ե)։

1.7. *ու//ի*, որով հանդիպում է 2 բառ՝ *կոդոպուտ* և *վնաս*։ Ահավասիկ *վնաս* բառի բնագրային օրինակներ՝ Եւ հարկանիցեն զկին յղի եւ ելանիցէ սաղմնն աննկար, կէս *վնասու* տուժեսցի (ՍԳ)։ Ոգովք չափ գային *վնասուցն* (ՓԲ)։ Իբրեւ զգաստ եղեւ Յուդա վասն անօրէն խակութեան *վնասին* (ՍԳ)։ Զի՞նչ խորհելով եւ կամ ո՞րպիսի ինչ զմտաւ ածեալ զայդպիսի իրս *վնասից* իշխեցեր ձեռնարկել եւ գործել (ՂՓ)։

1.8. *ի//ու*, որով հանդես է գալիս 2 բառ՝ *առաւօտ* և *կահ*։ Օրինակներ *առաւօտ* գոյականով՝ Մինչ դեռ *առաւօտին* աղօթքն մատչէին (ՓԲ)։ *Յառաւօտուն* ժամուն այգանալոյն պաշտամանն (ՓԲ)։ Զարթի՛ք փառք իմ, եւ ես զարթեայց *առաւօտուց* (ՍԳ)։

1.9. *ու//ի-ա,* որով հանդես է գալիս 3 բառ՝ *ժամ, նարօտ, նաւ*։ Ահա օրինակներ *նաւ* բառով՝ Իբրև լուաւ Յիսուս գնաց անտին *նաւու* յանապատ տեղի առանձինն (ՍԳ)։ Կանամբք և մանկտւով ածել զնոսա *նաւուք* (ՍԳ)։ Եւ զշաւիղս *նաւի* ընդ ծով գնացելոյ (ՍԳ)։ *Նաւաց* հետք ճանապարհի (ՍԳ)։ Թողուն զժողովուրդ և առնուն *զնաւաւն* յանդերձ (ՍԳ)։ *Նաւօք* բազմօք (ՍԳ)։

1.10. *ի-ա//ու*, որով հոլովվում է *վաճառ* բառը՝ Եւ եղիցի վարձ *վաճառի* նորա Տեառն նուիրեալ (ՍԳ)։ Ի բազմութեան *վաճառաց* քոց (ՍԳ)։ Ի շահս՝ որք *վաճառու* են (ՆՀԲ)։ Գինք *վաճառուց* արքայի (ՍԳ)[16]։

1.11. *ո//ու*, որով առանձնանում է 7 անուն՝ *արմաւ, արջ, կերպաս, ձախ, միամօր, ուլ, ցիռ*։ Ահա օրինակներ *արջ* բառով՝ *Արջոյ* ի բայոց մտանելոյ (ԵԿ)։ Արձակել ի վերայ բազմութիւնս *արջոցն* (ՆՀԲ)[17]։ Ոտք նորա իբրև *զարջու* (ՍԳ)։ Ի վերայ *արջուցն* և առիւծուցն (ԱԳ)։

1.12. *ու//ո,* որով հանդիպում է 4 բառ՝ *երինջ, հաւ* («պապ» իմաստով), *մաղ, մաղձ*։ Ահա օրինակներ *հաւ* բառով՝ Յակոբայ և նորուն հօրն կամ *հաւուն* երևեցաւ յայտնապէս (ՆՀԲ)։ Հարանց կամ *հաւուց* կամ նախնեաց (ՆՀԲ)։ Ի մայրենի *հաւոյ* իւրոյ Գնելոյ Գնունւոյ (ՄԽ)։

1.13. *է//ի-ա,* որով հանդես են գալիս *աղբիւր, անգդ, աստղ, եղջիւր, կայսր* գոյականները։ Երկբաղադրիչ *է//ի-ա* տարբերակը նախորդներից առանձնանում է նրանով, որ զուգաձև կազմող անդամները ներկայացնում են հոլովման միևնույն համակարգը. ձայնավորահանգ են, ինչպես՝ *ի-ա//ո, ու//ի* և այլն, մինչդեռ *է//ի-ա* [1] տարբերակը հոլովումների համադրության անկանոն տիպ է. զուգաձևի անդամներից առաջինը թեքվում

[16] Վկայվում է նաև *ո* հոլովման եզակի թվով՝ *վաճառոյ* (ՆՀԲ)։

[17] 5-րդ դ. հայ պատմագիրների, Եզնիկ Կողբացու, Կորյունի երկերի և Աստվածաշնչի լեզվական նյութը քաղել ենք բնագրերից, մնացած լեզվական նյութը բերում ենք Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածներից՝ ՆՀԲ հղումով։

է *ե* ձանորդահանգ, իսկ երկրորդը՝ *ի-ա* ձայնավորահանգ հոլովմամբ: Այսպես՝ *աղբիւր* գոյականը ձանորդահանգ և ձայնավորահանգ հոլովումների զուգաձև ունի ոչ միայն հոգնակի սեռականում (բնականաբար՝ նաև տրականում ու բացառականում) և գործիականում [*աղբերց* (ՍԳ, ՄԽ, ՂՓ)//*աղբերաց* (ՍԳ, ՄԽ, ՂՓ, ՓԲ), *աղբերբք* (ՍԳ) //*աղբերօք* (ԱԳ)], այլև հոգնակի ուղղական, բնականաբար նաև հայցական հոլովներում՝ *աղբերք* (ՍԳ, ԵԿ)//*աղբեւրք* (ՍԳ)//*աղբիւրք* (ՆՀԲ)[18]: Խորենացու երկում, օրինակ, միաժամանակ հանդիպում է բառիս հոգնակի ուղղականի *աղբիւրք//աղբերք* զուգաձևը[19]: Ահավասիկ օրինակներ նաև այդ շարքի *անգղ* գոյականի հոգնակի սեռականով՝ Բարք *անգեղց* (ՆՀԲ): Կարգեալ է ի կերակուր *անգեղաց* (ՍԳ):

2. *Երանդամ զուգաձևությամբ* անունները (ընդամենը 7 բառ՝ *ամոլ, բիծ, երկիւղած, համար, համբաւ, ճեպ, քանդակագործ*) արտահայտվում են կանոնավոր հոլովումների տարբեր համադրություններ ներկայացնող չորս տարբերակով, որոնք են՝

2.1. *ի//ի-ա//ո,* որով հանդիպում է 4 բառ՝ *ամոլ, բիծ, երկիւղած, քանդակագործ*: Օրինակներ *քանդակագործ* բառով՝ Զիա՞րդ ծակոտեալ դրոշմեալ են իբրև զգործ *քանդակագործի* զարմանալի՝ տերևովքն այգիք (ՆՀԲ): Միւնս երկուս, եւ շրջանակս *քանդակագործից* սեանցն, ի վերայ գլխոյ սեանցն, երկուս երկուս վանդակապատս, ծածկել զերկուսին շրջանակսն *քանդակ«»ագործացն*, որ էին ի վերայ սեանցն (ՍԳ): Եւ ձուլեաց զայն *քանդակագործով*, եւ արար որթ ձուլածոյ (ՍԳ):

2.2. *ո//ու//ի,* որով հանդես է գալիս *համար* գոյականը՝ Միահամուռ թուէ զկշիռ ոսկւոյ եւ զարծաթոյ եւ զթիւ *համարոյ* ժողովրդեանն զանցելոցն ի հանդիսի (ՍԳ): Եւ ռոճիկ նորա ռոճիկ հանապազորդ տուաւ նմա ի տանէ թագաւորին, *համարով* օրըստօրէ զամենայն աւուրս կենաց իւրոց (ՍԳ): *Համարոցն* նոցա, յաւուրս Յովաթամայ արքայի յուդայ, եւ յաւուրս Յերոբովամայ արքայի Իսրայելի (ՍԳ): Բազում նուագս ոսկիս կորուսեալ ի միջոյ *համարուէն* (ՍԳ): Եւ այս է թիւ *համարուցն,* զոհարանք ոսկեղէիք երեսուն, եւ զոհարանք սպասուն արծաթեղէիք՝ հազար քսան եւ ինն (ՍԳ): Եւ ոչ եղեւ *ի համարի* բան իմ, նախ՝ ինձ դարձուցանել զարքայ առիս (ՍԳ):

2.3. *ո//ի//ի-ա,* որով հոլովվում է *ճեպ* բառը՝ Զի՞նչ իրք իցեն վասն անօրէն *ճեպոյն* (ՍԳ): Ժամ տուեալ ուրախութեան հարսանեաց՝ *ճեպով* տագնապաւ փութայր զուրախութիւնս հարսանեացն կատարել (ԱԳ): Ոչ առ *ճեպի* աղքատութեան անարգանացն բռնի վարելոյ և ածելոյ (ՆՀԲ): *Ճեպաւ* դեսպանօք զգացուսցուք (ՂՓ):

2.4. *ո//ու//ի-ա,* որով հանդես է գալիս *համբաւ* բառը՝ Ի լուր *համբաւոյ* նորա իմաստնացան տգէտք, եւ ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լկտիք (Ե): Եւ այսք այսպէս թշնամանեալք եւ հայհոյանօք հալածեալք, ոչ յերեկոյս ինչ ժամանակաց զրուցատրութեամբք յումեքէ *համբաւուց* ծանուցաւ մեզ (ՂՓ): Ախտաժէտք գային ի *համ-*

---

[18] *Աղբերք* կազմվել է ձայնորդահանգ հոլովման օրինաչափությամբ՝ եզակի սեռականից, *աղբեւրք//աղբիւրք*՝ ձայնավորահանգ հոլովման օրինաչափությամբ՝ եզակի ուղղականից:

[19] **Խաչատրյան Գ. Կ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011, էջ 17:

*բաւին* (ՄԽ)։ Մի երբէք զանգիտիցեն սիրտք ձեր, եւ մի երկնչիք *ի համբաւաց* զոր լսիցէք յերկրին (ՍԳ)։

Սրանից բացի՝ կան գոյականներ (թվով 7), որոնցից վեցն ունի երկանդամ զուգաձև, մեկը՝ եռանդամ։ Այս գոյականները վերոնշյալ երկանդամ և եռանդամ շարքերից առանձնանում են նրանով, որ այս դեպքում զուգաձև կազմող անդամներից մեկը (եռանդամի դեպքում՝ երկուսը) կանոնավոր հոլովման է ենթարկվում, մյուսը՝ անկանոն հոլովման։

Այս խմբի՝

1. *Երկանդամ զուգաձևերն* արտահայտվում են անդամների համադրության հետևյալ տարբերակներով՝

1.1. *ան//ի-ա,* որով հանդես է գալիս *անդրանիկ* բառը։ Հմմտ. Զանունն *անդրանկանն* (ՍԳ)։ *Անդրանկին* իւրում (ՍԳ)։ *Անդրանկաւ* եզին քո (ՍԳ) և Փոխանակ ամենայն *անդրանկաց* (ՍԳ)։

1.2. *ի//եան*, որով առանձնանում են *թաքուստ* և *փախուստ* բառերը, ինչպես՝ Տեղի *փախստի* և *թաքստի* (Ե)։ Այլ և յանցուցեալ և *թաքստեան* եղեալ (ՄԽ)։ Ապաստան *փախստեան*, տեղի ապաւինի (ՆՀԲ)։

1.3. *եան//ո*, որով արտահայտվում է *ծնունդ* բառը՝ Ժամանակ *ծննդեան* յամուրաց (ՍԳ)։ Պա՛րտ է հոգևոր *ծնունդոցն* հոգևոր վարս ստանալ (ՆՀԲ)։

1.4. *ու//ուան*, որով հանդես է գալիս *մահ* բառը՝ *Մահու* պարտական լիցի (ՍԳ)։ Եւ եղեւ յետ *մահուանն* Աբրաամու (ՍԳ)։ Խորենացու երկում միաժամանակ հանդիպում է բառիս հոգնակի ուղղականի *մահք//մահունք* զուգաձևը[20]։

1.5. *եան//ի-ա*, որով հանդիպում է *նաւահանգիստ* բառը՝ Ի *նաւահանգստեանն* նաւաբեկ լինիցիս (ՆՀԲ)։ Զմերել ի *նաւահանգստին* կրետացւոց (ՍԳ)։ Իբր ի *նաւահանգստաց* համբարձեալք (ՆՀԲ)։

*2. Եռանդամ զուգաձևն* արտահայտվում է կանոնավոր և անկանոն հոլովիչների *ո//ի//եան* համադրությամբ, որով հոլովվում է *խորհուրդ* բառը՝ Իբրեւ թէ բարեխօսէր ի խաղաղութիւն աշխարհին, բայց սրտի *խորհրդով* ցանկացեալ էր քահանայապետութեան աշխարհին (ՍԳ)։ Ոչ կամէին անսալ *խորհրդոց* իմոց (ՍԳ)։ Ըմբռնեցին նոքա զտեղիսն զայն ամենայն *խորհրդովք* իւրեանց (ՍԳ)։ Հաստատեցաւ բանս այս ի *խորհրդի* անդ՝ քակել զսեղանն զի պղծեալ էր ի թշնամեաց (ՍԳ)։ Վասն զի *խորհրդիւ* եղեւ զօրագլխացն այլազգեաց (ՍԳ)։ Խօսեցաւ ընդ նոսա ըստ *խորհրդեան* մանկտւոյն (ՍԳ)։

Նկատելի է, որ այս խմբի յուրաքանչյուր տարբերակով, բացի *ի//*եան-ից, հանդես է գալիս մեկ գոյական, սակայն դրանցից մի քանիսն առայսօր մասամբ պահպանել են զուգաձև հոլովումների հետքեր (*մահու//մահվան, կորստի//կորստյան, փախուստի//փախստյան*)։

Դասական գրաբարի ենթաշրջանի լեզվական աղբյուրներում հանդիպող՝ թվով 145 հոլովական զուգաձևերի մեծագույն մասը (շուրջ 95%) երկանդամ է, և միայն թվով 8

[20] **Խաչատրյան Գ. Կ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր,Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011, էջ 15։

(շուրջ 5%) զուգաձևեր են եռանդամ: Զուգաձևերի բաղադրիչ անդամները գերազանցապես *ի, ի-ա, ո* և *ու* ձայնավորահանգ, հազվադեպ՝ *ա, է* ձայնորդահանգ և անկանոն հոլովումներին պատկանող բառաձևեր են: Դրանք միմյանց հետ հանդես են գալիս տարբեր համադրություններով, որոնցից են՝ *ի//ի-ա* (գունդ-*գնդից//գնդաց*), *ու//ո* (երինջ-*երնջու//երնջոյ*), *ի-ա//ո//ու* (վաճառ-*վաճառի-վաճառաւ//վաճառոյ//վաճառու*), *ո//ու//ի-ա* (համբաւ-*համբաւոյ-համբաւով//համբաւու//համբաւի-համբաւաւ*), *եան//ո* (ծնունդ-*ծնդեան//ծնդոյ*), *է//ի-ա* (աղբիւր-*աղբերց//աղբերաց*) և այլն: Տարբեր համադրություններում գործածված բառաձևերի քանակով առանձնանում են *ո, ի* և *ի-ա* հոլովումները՝ հանդիպելով ոչ միայն եզակի և հոգնակի թվերի թեք, այլև հոգնակի թվի ուղիղ հոլովներով: Դրանցից *ո* պարզ հոլովման ձևեր, ըստ մեր հաշվարկի, տարբեր համադրություններում հանդիպում են 95 անգամ, *ի-ա* խառը հոլովման ձևեր՝ 92 անգամ, իսկ *ի* պարզ հոլովման ձևեր՝ 78 անգամ: Ասվածից հետևում է, որ 5-րդ դ. գոյականների և ածականների հոլովման համակարգում գործուն դեր ունեն վերոնշյալ հոլովիչները, ինչը էական ազդեցություն է թողել նշված համակարգում հետագայում կատարված փոփոխությունների վրա: Պատահական չէ, որ միմյանց հետ հաճախագույն համադրություններով առանձնանում են հենց *ո, ի* և *ի-ա* հոլովիչները (ըստ մեր հաշվարկի՝ 145-ից՝ 116-ում): Ընդ որում, սրանց երկբաղադրիչ զուգաձևերի երկրորդ բաղադրիչի դերում ամենագործունը ոչ թե *ի,* ինչպես կարելի է ենթադրել, այլ *ի-ա* խառը հոլովումն է թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում (ընդամենը՝ 66 անգամ, որից 30-ը՝ *ի* պարզ հոլովման բառաձևերի հետ)[21]: Ասվածը վկայում է *ի-ա* խառը հոլովման համար 5-րդ և հետագա մի քանի դարերում ստեղծված նպաստավոր հանգամանքի մասին՝ պայմանավորված գրաբարի հոլովման գործընթացի իրականացման հարցում հոլովիչների և հոլովակերտների գրեթե անփոխարինելի դերով[22]: Սրան հակառակ՝ *ու* հոլովիչով կազմությունները անհամեմատ փոքրաթիվ են. բոլոր համադրություններում հանդիպում են ընդամենը 21 անգամ, որից 11-ը՝ *ո* հոլովման ենթարկված բառաձևերի հետ: Դժվար չէ ենթադրել, որ *ո* հոլովիչի *ու*-ով փոխարինվելը 5-րդ դ. նոր միայն սկսվող գործընթաց է, որը հաճախանում է հետագայում: Ի դեպ, անդրադառնալով *ո//ու* զուգաձևությանը՝ Է. Թումանյանն իրավացիորեն գտնում է, որ ընդհանրապես *ո* ձայնավորից անցումը *ու* ձայնավորին բնորոշ է գրաբարի հնչյունական համակարգին, և այն զուգաձևությունների տեսքով տեղ է գտել նաև հոլովման համակարգում: Արդյունքում ձևավորվել է զուգահեռա-

[21] Է. Թումանյանը նշում է, որ այդ ժամանակահատվածում ձևավորված հոլովման «համակարգի ճնշման ներքո» նկատվում է այլ հոլովման ենթարկվող անունների բացահայտ անցում *ի* պարզ և *ի-ա* խառը հոլովման համակարգեր (Տե՛ս **Туманян Э. Г**. Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 239):

[22] Հետագայում, երբ եզակի գործիականում ամրակայվում է *–ով* թեքույթը, իսկ հոգնակի ուղղականն սկսում է կազմվել *–եր//-ներ* ձևույթներով, *ա* հոլովիչը (և առհասարակ խառը հոլովումը) դուրս է մնում հոլովման համակարգից՝ հոգնակի թվում տեղն ամբողջովին զիջելով *ի* հոլովիչին:

բար հոլովվող անունների շարք, որոնք միաժամանակ կարող են կազմել ինչպես *ո* արտաքին, այնպես էլ *ու* արտաքին հոլովման հարացույց[23]:

Հիշյալ ենթաշրջանում *է* ձայնորդահանգ հոլովման մի քանի բառ զուգահեռաբար հոլովվում է նաև *ի-ա* ձայնավորահանգ հոլովմամբ: Ավելին՝ *է* հոլովման ենթարկվող մի շարք բառեր եզակի գործիականում և հոգնակի թեք ձևերում դադարել են *է* հոլովիչով հոլովվելուց և թեքվում են միայն *ի-ա* հոլովման օրինաչափությամբ, ինչը վկայում է այդ բառերում զուգահեռ հոլովման գործընթացն ավելի վաղ սկսված և 5-րդ դարում արդեն ավարտված լինելու մասին: Ասվածը դարձյալ պայմանավորված է նշված ենթաշրջանում (և դրանից էլ առաջ) *ի-ա* խառը հոլովման գործունությամբ. այն միակ հոլովումն է, որով զուգահեռաբար թեքվում է *ի, ո, ու, է* հոլովումների պատկանող բառերի մեծագույն մասը:

***Եզրահանգում.*** Անկանոն հոլովվող բառերից բացի՝ անկանոնությամբ առանձնանում են նաև մի շարք գոյականներ և ածականներ, որոնց թեքումը վկայում է դասական գրաբարի ենթաշրջանի հոլովման համակարգում առկա զուգաձևությունների մասին: Կանոնավոր ձևերին զուգահեռ՝ այդ բառերը հոլովվում են կանոնավոր (հազվադեպ՝ անկանոն) համակարգի այլ հոլովիչներով նույնպես: Ըստ բաղադրիչների քանակի՝ այդ զուգաձևերը հիմնականում երկանդամ են, սակայն հանդիպում են նաև եռանդամ (անհամեմատ փոքրաթիվ են) և քառանդամ (առհասարակ հազվադեպ են) զուգաձևեր: Հիշյալ ենթաշրջանում հոլովական զուգաձևեր ունեն շուրջ 150 գոյականներ ու ածականներ, որոնց մեծ մասը ենթարկվում է ձայնավորահանգ հոլովման: Դրանց հոլովման հարացույցների զուգաձևությունը գերազանցապես իրականանում է *ի, ո, ու, ի-ա* պարզ և խառը հոլովումների տարբեր համադրություններով (շուրջ 25 տարբերակ), որոնցում գործուն դեր ունեն *ո, ի* պարզ և *ի-ա* խառը հոլովումները: Հենց նրանք էլ որոշիչ ազդեցություն են թողել հայերենի հոլովման համակարգում հետագայում կատարված փոփոխությունների վրա:

## ПАРАЛЛЕЛЬНЫЕ ФОРМЫ В СИСТЕМЕ ИМЕННОГО СКЛОНЕНИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА КЛАССИЧЕСКОГО ПЕРИОДА

***Хачатрян Г. К., Оганнисян Е. А.***

**Ключевые слова:** *классический период древнеармянского языка, посткласcический период древнеармянского языка, падежные параллельные формы, двучленные параллельные формы, трехчленные параллельные формы, показатель склонения, склонения с основой на гласные, склонения с основой на сонорные, система склонения*.

Кроме слов с нерегулярным склонением в системе склонения древнеармянского языка классического периода нерегулярностью отличался также ряд существительных и прилагательных, склонение которых, однако, не являлось отклонением от регулярной системы, а представляло собой падежные параллельные формы: наряду с собственно регулярными формами они также изменялись по падежам с другими показателями склонения регулярной

[23] **Туманян Э. Г**. Древнеармянский язык. Москва. Изд-во «Наука». -1971. С. 238.

системы. По количеству компонентов эти параллельные формы в основном были двучленными, однако, встречались также трехчленные (их было несравненно меньше) и четырехчленные (единичные случаи).

Падежные параллельные формы в указанный период имели около 150 существительных и прилагательных, большинство которых склонялись по основам на гласные. Параллельность их парадигмы склонения осуществлялась преимущественно различным соотношением простых и смешанных показателей склонения с основами на ի [i], ո [o], ու [u], ի-ա [i-a] (около 20 вариантов), среди которых своей активностью выделялись простые (ո [o], ի [i]) и смешанные (ի-ա [i-a]) типы склонения. Именно они сыграли решающую роль в дальнейшей трансформации системы склонения армянского языка.

## PARALLEL FORMS OF NOMINAL DECLENTION SYSTEM IN THE SUBPERIOD OF CLASSICAL GRABAR

***Khachatryan G. K., Hovhannisyan Y. A.***

**Key words:** *the subperiod of classical Grabar, the postclassical period of Grabar, case parallel forms, two-membered parallel forms, three-membered parallel forms, declension indicator, vowel-rhymed and sonorant-rhymed declensions, declension system.*

In addition to the words with an irregular declension, in the declension system of the subperiod of the classical Grabar, a number of nouns and adjectives stand out also with their irregularity. Their declension, however, is not a deviation from the regular system, but rather has case parallel forms. In parallel to the regular forms, they are declined with the other case indicators of the regular system as well. In terms of the number of components, these parallel forms mainly have two members, however, there are also three-membered (incomparably fewer) and four-membered (isolated cases) forms. In this period, about 150 nouns and adjectives have parallel case forms, most of which are declined by vowel-rhymed declension. The parallel forms of their declension paradigm is mainly done by different arrangements of the [i], [o], [ou], [i-a] simple and mixed declentions (about 20 versions), the most active of which are the simple [o], [i] and the mixed [i-a] declensions. It is these declensions that have had a decisive impact on the subsequent transformations in the declension system of the Armenian language.

### Սկզբնաղբյուրներ և համառոտագրություններ

ԱԳ – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Ե – Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
ԵԿ – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Կ – Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
ՂՓ – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
ՄԽ – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
ՆՀԲ – Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
ՍԳ – Գիրք Աստուածաշունչք հին եւ նոր կտակարանաց, Վենետիկ, 1860:
ՓԲ – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

## Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն


1. Աբեղյան Մ. Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ, 1936:
2. Աբրահամյան Ա. Ա. Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1976:
3. Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987:
4. Առաքելյան Վ. Դ., Գրաբարի քերականութիւն, Երևան, «Վիամիր» հրատ., 2010:
5. Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ.Ս., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 2001:
6. Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011:
7. Խաչատրյան Գ. Կ., Գրաբար, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2014:
8. Շարաբխանյան Պ.Ե., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ.,1974:
9. Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարագյուլյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:
10. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք» հրատ., 1969:
11. Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во «Наука». -1971.



*Ընդունվել է՝ 10. 12. 2020*
*Գրախոսվել է՝ 06. 04. 2021*
*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*



**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** բանասիրական գիտությունների դոկտոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր, էլ. հասցե՝ gxachatryan@yahoo.com

**Երանուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝** Վանաձորի Հ.Թումանյանի անվ. պետական համալսարանի բակալավրիատի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտ. 3-րդ կուրսի ուսանողուհի, էլ. հասցե՝ eran.hovhannisyan@list.ru